

սորուն նա միայն գիտէ զճաշակ քաղցրութեան դորա:»

«Բայց սաստիկ ծոկեցաւ ճշգրիտ բանքդ ի ձեռն անխուժութեան գրագրաց եւ թուլութեան ուսումնաւորաց: Զոր վերայհասու եղեալ մեծ իմաստասէրն Հայոց հոգեխառն վարդապետն սուրբ յովհանէս մականուն սարկաւազորի գերահռչակ սուրբ ուխտն ի հախրաթ. եւ գտեալ ի յարկեղ սուրբ վարտապետացն եւ թագաւորացն զթարգմանագիր սաղմոսարանն, եւ պարապեալ ի յայնմաւուրս բազումն ի լոյս էած զգանձն ծածկեալ, եւ եբաց զեցեալ աղբիւրն, եւ ցրուեաց ընդ ամենայն սահմանս հայաստանի զաւրինակս զայս, եւ այդ նշմարս եւ ահիործրի (անընթեռնելի) յառաջիկայդ. յայն աւրինակէն եհաս (անընթեռնելի) ոմն սիրելի եւ զստացաւդ քս զմեզ յիշեսչիք յաղաւթս ձեր:»

«Եւ զանպիտան հողեկս Յիշեսչիք:»

Գեռ ինչեր կան արդեօք ծածկուած եւ գեռ ինչեր արդեօք պիտի յայտնուին:

Կ. Պոլս — Բերս.

ՏՈՂԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Թ Ա Կ Ա Ն

ԽՈՒՉՈՒԻՊՈՒԻ ԽՈՒՉՊՈՒԱՅ ՎՊԱՅ

խորհուրդ խնդրել՝ անձարի է. խորհուրդ ձանձնալ՝ հանձարի է:

*

Ընկեղծութեամբ խորհուրդ խնդրողին պարտական ենք ի խղճէ բարի խորհուրդ տալու: Մեզն տրուած լոյսն ոչ միայն մեր անձին՝ այլ նաեւ ընկերին համար է:

*

Բարի խորհուրդ է լոյս խաւարելոց, առաջնորդ կուրաց, ուսուցիչ տգիտաց....

Եւ՝ «Ինչ գրե՞՞ր ու շատ հասնչեց:»

*

Չուրի մէջ ինկող մը «Օգնութիւն», պոռաց. դուն ձեռքդ անոր երկնցուցիր, բայց անիկայ քեզի բռնցի զարկաւ: Ահա որչափ այսպիսի եղիկիք:

*

Ամենեւին չձանչցած մարդուն խորհուրդ մի հարցնենք:

*

Խորհրդատուութիւն մ'ուրիշ բան չէ՝ բայց եթէ կարօտելոյ բաշխեալ ողորմութիւն: «Աղբալք, դուք մի ձանձրանայք զբարիս գործել», ազքատաց. ըսաւ մէկն Աստուծոյ կողմանէ: Մենք ալ նոյնպէս:

*

Այսօր տղայ մը քեզմէ խորհուրդ կը խնդրէ. վաղը տղան կը մեծնայ՝ ուրիշին խորհուրդ կու տայ: Այսպէս աշխարհքիս մարդկութիւնն ձեռն ի ձեռն յառաջ կ'երթայ:

*

Ամենուն խորհուրդ հարցուր, բայց քու խելքդ ունեցիր: (Այսպէս սակայ կը սէր ինձի սիրելի ծնողն իմ:)

*

Բարի խորհուրդ տուողն՝ Աստուծոյ փոխանորդ կ'ըլլայ: Աստուած ոչ եթէ ինքնին՝ այլ միջնորդօք կը վարէ զաշխարհքը:

*

Բարի խորհուրդ մը տուիր. բան մը պակսեցաւ քեզմէ:

*

Վայ չար խորհուրդ տուողին. անկէ աւելի անզգամական բան չկայ: Աւ ստուգիւ ինչպէս կ'ըմբոստանայ սրտերնիս եթէ լսենք՝ թէ այս անուն մարդը մոլորեալ կուրի մը ձեռքէն բռնած՝ մինչեւ անդունդին բերանը տարեր ու «հիմայ շիտակ յառաջ գնա» ըսելով՝ թող տուեր է որ թշուառը թաւաղղոր ի խորս զահալիթի:

*

Տրուած բարի խորհուրդն ընկերսիրութեան գործ մըն է, որ մեզն սովորաբար դժուարութիւն չի պատճառեր: Պատուական արժանիք մըն է, զոր առանց քրտանց ձեռք կը բերենք:

*